

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ Գրագրի

ԳԱՀԻԷ (Եգիպտոս)

# ԱՐՇԱՆՈՅՍ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՐԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՂԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան շրջ դասին.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՑԻ	
Երեւոյն	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՐԻՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խնարարութեան վրայ է :

Խնարարութեան ուղղութեամբ  
գրութիւնք է՝ չեն ճիշտիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ  
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN  
Dirac. propr. du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (EGYPTE)

#### ԻՄԲԱԿՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն  
կա խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴԻ տարւոյ բա-  
ժանորդագրիւնը որկեղ Տնօրինութեան հաս-  
ցիլն :

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժա-  
նորդներէն աչ ջերմասպէս կը խնդրուի,  
որ բարեհաճի ճիշտութեամբ տեսնել մնաց-  
եալ պարտոց կցելով որկեղ ճիշտ իրենց  
ԵՐԿՐՈՐԴ Տարեկանի բաժանորդագրիւնը,  
եւ հարկ չը թողոյ մասնաւոր դիմումնե-  
րու, որովք ճիշտ դիմումներն մը պիտի  
ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ արդէն բազմազան  
Տնօրինութեան :

#### ՊԱՐՍԻՑ ԶԱՅԸ ԵՒ ԼԱՌՄԵՆԻ

(Շարն . նախորդ թիւէն)

Վեհափառ Տէր

Այն միջոցին, յորում ամբողջ Եւրոպա՝  
իրբե մի քնարերգակ Պարսկաստանը ներ-  
կայող առիւծի պէս անվեհեր և արեգի պէս  
լուսաճաճանչ Արքայից Արքային փառքն ու  
գեղը կը նուագէ, Ձեր Վեհափառութիւ-  
նը թող թող տայ որ երկրիս զանազան  
կողմերէն Սէնի ասպնջական ափանց վրայ  
հաստատուած Հայերու մի պատգամաւորու-  
թիւնը Անոր գահին ոտքերուն առջև թըր-  
թոսցնէ երախտագիտութեան թելը, և  
անկեղծագոյն շնչտերով նուագէ Մօզաֆ-  
ֆէր-էտ-Տին Գահար Շահի ազնիւ սիրտը և  
անսպառ գութը :

Այս երախտագիտութիւնը, Վեհափառ  
Տէր, կը պարտինք այն մեծ հոգածութեան  
զոր ձեր Կայսերական Վեհափառութեան  
կառավարութիւնը միշտ տածած է իր բար-  
ձր հովանաւորութեան տակ ապրելու բա-  
րեբաղդութիւնն ունեցող քրիստոնեայնե-  
րուն վրայ, և կրօնական այն ազատութեան  
որ շնորհիւ ձեր Կայսերական Վեհափառու-  
թեան և իր գերապանծ նախորդներուն կը  
տիրէ Պարսկաստանի մէկ ծայրէն միւս ծայ-  
րը : Այն պաշտպանութիւնը, զոր Իրանի  
Օգոստափառ Վեհապետին ներկայացուցիչ-  
ները այնքան վեհանձնաբար և ինքնաբե-  
րաբար շնորհեցին մեր կրօնակիցներուն,

բերկրութեամբ կը լեցնէ մեր սիրտերը :  
Ուստի, թախանձելով կը խնդրենք ձեր  
Կայսերական Վեհափառութեանն որ հա-  
ճի իւր յիշատակ Բարիղի Հայ գաղթակա-  
նութեան ընդունիլ պատկեր մը, զոր նը-  
կարած է մեր պատգամաւորութեան մէկ  
անդամը Պ. Պաշինճաղեան և որ կը ներ-  
կայէ Արարատ լեռը, Պարսկաստանի սահ-  
մանազուրիս վրայ :

Տայ Աստուած որ ձեր Կայսերական Վե-  
հափառութիւնը, որ գեղեցիկ այնքան հը-  
րաշլի կերպով պահպանուեցաւ ամենէն  
վատ սպանութեան փորձէ մը, վայելէ եր-  
կար կեանք, իր հպատակներուն և իր  
պաշտպանեալներուն բարեբաստութեանն  
համար : Տայ Աստուած որ Պարսկաստան  
միշտ մնայ երկիր փառապանծ, ազատ և  
անկախ :

Ն. Վսեմութիւն, շքեղար նազար Ա-  
ղա պարսկերէնի թարգմանեց այս բանա-  
խօսութիւնը : Շահը նոյն լեզուով պատաս-  
խանեց և պարսկական գեապանը ֆրանսե-  
լէնի թարգմանեց Կայսերական հետեւեալ  
բառերը :

« Միշտ խորապէս համակրած եմ հայե-  
րուն : Կրնաք իմ կողմէս վստահեցնել ձեր  
բարեկամներն և հայրենակիցները թէ Հայե-  
րը միշտ կրնան յիշուլ իմ բարեացակա-  
մութեանս և պաշտպանութեանս վրայ » :

Մեր Տնօրէնը փութաց շնորհակալու-  
թիւն յայտնել Ն. Կ. Վեհափառութեան  
բարձր հոգածութեան այս նոր հաւաստի-  
քին համար, յաւելլով որ Հայ ազգը միշտ  
պիտի օրհնէ Անոր անունը և գեղից ցերեկ  
պիտի աղօթէ Անոր թանկագին կենաց պահ-  
պանութեան համար : Շահը իր շնորհակա-  
լութիւնը կը յայտարարէ լոկ մի քանի  
բառերով :

Ն. Վ. ուշի ուշով կը գետէ Պ. Պա-  
շինճաղեանին պատկերը . կը ճանչնայ Արա-  
րատ լեռը, որուն ստորոտը տազանդաւոր  
արթիտը նկարած էր Հայ գեղեցիկ մը որ  
պարսիկ գիւղացւոյ մը ձեռքը կը սեղմէ :  
Աղոյր Տաղն է սա, կ'ըսէ Ն. Կ. Վեհափա-  
րութեանն : Ահա՛ մեծ Արարատը և ահա՛  
փոքրը : Մեծը Պարսկաստանի սահմանազ-  
լիսն վրայ է, բայց փոքր Արարատ մեզի կը  
պատկանի գլխովին, վասնզի պարսկական  
հողին վրայ է : Յայտնի հաճոյքով կը կրկ-  
նէ « շատ լաւ » բառերը, և նաչար Աղային  
կը հրամայէ պատկերը խրկել իր թէհերա-  
նի պալատը :

Պատգամաւորութիւնը կը մեկնի իրեն  
եղած սիրալիր ընդունելութեան մասին իր  
երախտապարտութիւնը յայտնելէ ետքը :

Շնորհակալութիւն կը յայտնէ նաև պարս-  
կաստանի մեծանուն գեղարարին Գիւր քառորդ-  
դարէ մ'աւելի Ժամանակէ ի վեր կատար-  
եալ կենցաղադիմութեամբ և մեծ արժա-  
նապարտութեամբ կը ներկայացնէ իր հայ-  
րենիքը ֆրանսական կառավարութեան քով :  
Նաչար Աղա Գաղղէացի մ'է Ուրմիոյ, բայց  
շատ լաւ կը խօսի հայերէնը և էնագօլօպ-  
եան ընտանիքէն գեղանի հայուհւոյ մը հետ  
ամուսնացած է : Ունի բազմաթիւ որդիներ,  
որոնք իրենց ուսման թեւամբ անոր կ'օգնեն  
իր բարձր պաշտօնին մէջ :

Այս ունեցողութեան հետեւն ըրով մեր  
Տնօրէնը պատիւ ունեցաւ Շահին ստանալու  
Կայսերական Առիւծ և Արեգակ շքանշանին  
պաշտօնակալի (չորրորդ) աստիճանը, և Պ.  
Պաշինճաղեան ասպետի (հինգերորդ) աս-  
տիճանը :

Քիչ բարձր պատիւը որ եղաւ մեր Տն-  
օրէնին յայտնի նշանէ որ Ն. Կ. Վեհափառ-  
ութիւնը կը գնահատէ Արմենիի շանքե-  
րը ամրապնդելու համար այն գարաւոր կա-  
պերը որոնք Հայերը կը միացնեն իրենց փա-  
ռապանծ գրացի պարսիկներուն : Տասներ-  
կու տարիէ ի վեր մեր թերթին անփոփոխ  
քաղաքականութիւնն եղած է սիրալիր հնչ-  
մանակութիւնը ամրացնել Պարսկաց Ն.  
Հայոց մէջ : Մտադիր ենք հաւատարիմ մը-  
նալ մեր այս ուղղութեան, որ հիմնուած է  
Ասիոյ այս երկու փաղեմի ցեղերուն փոխառ  
դարձ համակրութեան և երկուստեք շահե-  
րուն վրայ :

#### ՆԱՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՎԱՆԱՅ ՍԸ

Վերջերս հիւր ունեցանք Ռուսահայ քահա-  
նայ մը, վկայեալ Տիւրիսի համալսարանին, որ  
Երուսաղէմ ուխտագնացութենէ կը դառնար :

Մեր մէջ բարձրագոյն կրթութիւնն առած  
եկեղեցականներու թիւը այնքան ցանցագէ որ  
յիշեալ քահանային ներկայութիւնը հետաքրք-  
րական երեւոյթ մը դարձաւ ամեն անոնց հա-  
մար որոնք իր գալուստը լսեցին :

Եւ արդարեւ այդ քահանայն ամեն գոտա-  
կարգի անձերու կողմէ, սկսեալ պաշտօնաւոր  
մարմիններէն, համակրական ընդունելութեան  
գտաւ և հրաւիրուեցաւ անցեալ կիրակի օր պա-  
տարագ մատուցանել քաղաքիս Ս. Եկեղեցւոյն  
մէջ :

Եկեղեցին լեցուն էր հաւատացեալներու  
բազմութեամբ և ամեն մարդ սրտաբար կ'ըս-

պատեր ժողովրդին մատչելի լեզուով հիւթեղ կրօնական քարոզ մը լսել յիշեալ քահանայէն, արժանի իր համալսարանական համբաւին :

Բայց որքան մեծ եղաւ ամենուն զարմանքը եւ կրած յուսախաբութիւնը երբ պատարագիչ քահանան, մէկզի թողով հոգեւոր քարոզութիւնը, բեմ կ'ելլէր կուսակցական հաշիւներ մաքրելու եւ ազգային իշխանութիւնը հարուածելու, մինչեւ եօթներորդ երկինք բարձրացընելով, միեւնոյն ատեն, Թաղ. Խորհրդոյ միջնակարգ ուսում առած մէկ պաշտօնեայն որուն համար, տէր հայրը, իր ոգեւորութեան վերնագաւառներուն մէջ մոլորած, կը յայտարարէր թէ կարող է մինչեւ իսկ համալսարաններ կառավարել. . . : Խեղճ հայ ժողովուրդ, ծոցիդ մէջ ոսկի ինչ անգին գանձեր ունիս, անոնց գոյութեան եւ արժէքին անգիտակ, եւ ուստահայ քահանայի մը, ան ալ համալսարանականի մը, կը բաւէ երկու օրուան մէջ Մովսէսի մուգական գաւազանովը իրենց թագստոցէն լոյս աշխարհ բերել զանոնք, քամահրելով Աղէքսանդրիոյ ժողովուրդին պաշտօնական ներկայացուցիչները որոնք ո՛չ միայն չ'են կրցած այդ չքնաղ հաստատութիւնները գնահատել՝ այլեւ իրենց անտեղի միջամտութեամբը արգելք հանդիսացած են անոնց աճեցուն եւ համարձակ յառաջդիմութեան . . . :

Առաջին անգամը չէ՛ որ մեր եկեղեցական հարձ սրբազան բեմը միջոց կ'ընտրեն անձնական, կուսակցական հաշիւներ մաքրելու եւ կը մոռնան այն նուիրական գերը զոր ունին՝ ամեն կուսակցութիւններէ բարձր մնալու : Եւ սակայն մեր եկեղեցականներու տգէտ մասին համար այն պարտականութիւնը, որքան ալ խոշոր ու ցաւալի, բայց մինչեւ մէկ աստիճան ներելի է, իրենց արդարացումը իրենց տգիտութեան մէջն է : Բայց ի՞նչ ըսենք զարգացած եկեղեցականի մը, համալսարանականի մը, որ այս տեսակետով իր տգէտ կարգակիցներէն ո եւ է տարբերութիւն չ'ունենար : Ինչո՞վ ուրեմն աւելի բարձր է զարգացածը տգէտէն, եւ ինչո՞վ աւելի օգտակար՝ իր հօտին :

Բայց ներկայ պարագային մէջ ուստահայ տէրօր ընթացքը ո՛չ միայն իբրեւ եկեղեցականի, այլ իբրեւ պարզ անհատի, նոյն իսկ իբրեւ բեմբասացի ալ անարդարանալի է ու մնասակար :

Յայտնի է թէ ամեն քաղաքի մէջ կուսակցութիւններ գոյութիւն ունին եւ նորեկի մը համար անկարելի է երկու օրուան մէջ, միայն մէկ կողմը լսելով, գաղափար կազմել եւ անձնական համոզում գոյացնել տեղական-կուսակցական խնդիրներու եւ գործերու նկատմամբ : Եթէ նորեկ մը, մինչեւ իսկ իրեն վաղածանօթ անձերէ ալ լսէ ինչ ինչ տեղեկութիւններ, զարձեւալ պարզամտութեան ապացոյց տուած կ'ըլլայ անոնց ամեն մէկ ըսածին հաւատ ընծայելով : Գի մարդ երբ չէզոքութեան սահմանէն կուսակցական շրջանակի մէջ կ'անցնի, որքան ալ ընտրի յատկութիւններու տէր եղած ըլլայ այն պիտի, զարձեւալ չէ կարող ինքզինքը միշտ բարձր պահել կուսակցական կիրքերէ կամ իր շրջանակին ազդեցութենէն, կրնայ մինչեւ անգամ անգիտակցաբար սխալիլ իր համոզումներուն մէջ : Հետեւաբար կուսակցական խնդիրներու անձնավստահ կերպով իրազեկ ըլլալու համար մարդս պարտաւոր է բաւական երկար ժամանակ հետազոտութիւններ կատարել, ճիշտ ինչպէս որ վարժարանի մը ներքին կեանքին եւ իրական յառաջդիմութեան իրազեկ ըլլալու համար 1-2 օրուան այցելութիւն մը եւ անօրէնի մը կողմէ հաղորդուած տեղեկութիւնները անբաւական են :

Ասկէ զատ, թէեւ ամեն մարդ ազատ է իր ուզած կուսակցութեան պատկանելու, բայց խմբակի մը յարելու համար ամեն մարդ հաշիւ մը ունի, այդ հաշիւն ալ ուրիշ բան չէ բայց եթէ գործել այդ կուսակցութեան մէջ, օգտա-

կար ըլլալ անոր : Բայց չեմ կրնար ըմբռնել թէ երբ մէկը քաղաքի մը մէջ քանի մը օրուան հիւր է միայն, ինչո՞ւ համար նախապատուութիւն տալու է մէկ կամ միւս կողմին, քանի որ ո՛չ մէկին օգտակար եւ ո՛չ միւսին միասակար կըրնայ ըլլալ :

Եւ յետոյ, մարդ մը որ զանազան դասակարգերէ հաւասարապէս կը յարգուի՝ ո՛ւրիշ իրաւունք կ'ստանայ մէկ կողմը գովելու ի վնաս եւ ի նախատինս միւս կողմին :

Մենք չենք խօսիլ այն խմբակին անորակելի արարքին վրայ՝ որն որ ամեն նորեկ Ս. Ղէքսանդրիոյ նաւահանգիստը ժամանածին պէս, տակաւին ոտքին փոշիները չի թոթուած, իր կուսակցութեան մէջ առնելու ծիծաղելի ճիգեր կը թափէ : Չենք ալ ծանրանար թէ որքան անվայել բան էր իրենց համար՝ քահանայ մը - որ 3-4 օր հիւր է քաղաքին մէջ - կուսակցական կըռիւններու մէջ խառնել :

Կը զարմանանք ու կը ցաւինք սակայն թէ համալսարանական քահանայ մը անկարող կը գտնուի այսչափը մտածելու եւ գործիք կը գտնուի այսօրինակ խեղճատակութեան մը :

Վերջին խօսք մ'ըն ալ, Տէր հայր : Բեմբասաց մը, երբ իր կոչումին գիտակցութիւնը ունի, պարտաւոր է ընդհանուր չէզոք ներթեւրու վրայ միայն խօսիլ երբ իր ունկնդիրներուն մէջ ամեն կուսակցութեանց պատկանող անհատներ կը գտնուին : Ազատ է կուսակցական ներթեւրու վրայ ճանաչել այն ատեն միայն երբոր ունկնդիրները բոլորն ալ այդ նոյն կուսակցութեան կը պատկանին : հակառակ պարագային, առաջին խօսքերէն իսկ ունկնդիրներէն մէկ մասը իրեն հետ եւ միւս մասը իրեն դէմ կ'ունենայ, որով իր ատենախօսութիւնը փոխանակ օգտակար հանդիսանալու, ընդհակառակը գայթակղութեան քար միայն կը դառնայ : Գիտէք որ, Տէր հայր, ճարտասանութեան կանոններուն մէջ է ասիկա եւ դուք կ'երեւայ թէ համալսարանը շատոնց թողած ըլլաքուրդ համար այս կանոնը մոռցած էք, ճիշտ ինչպէս որ միեւնոյն պատճառով մոռցած ըլլալու էք թէ միջնակարգ ուսում առնող մէկը, ինչ որ ալ ըլլայ իր արժանիքը, համալսարանի տեսուչ չի կրնար ըլլալ . . . :

ՈՉ-ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԸ

### Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Էճիբարն կազէք կը հերքէ Տեյրի քեյկիրաւի տուած մի լուրը, որուն համեմատ Բրիտանական զորքերէ կազմուած արշաւախումբ մը կը պատրաստուէր Քորնթոսի մտնելու համար :

ԹՐԱՆՍԻԱՍԻԻ Իրլանտական մասնաճիւղի անդամները Տրպլին քաղաքին մէջ համախմբուելով քուէարկութեամբ ընդունեցին հետեւեալ ուղեքնդ, զոր առաջարկած է ստորագրած էր Միս Մօտ Կօն հանրաժանօթ (Իրլանտացի հայրենասէր) և որ պիտի յանձնուի նախագահ Քրիւկէրի, երբ Փրանսա հասնի :

« Կը փափաքենք որ Իրլանտայի ազգասէրները չ'չիթիէք Իրլանտացի այն զօրքերուն հետ որոնք ձեր ժողովուրդին դէմ կուռեցան Հարաւային Ափրիկէի մէջ անոնք՝ չ'քաւորութենէ և զինուորական կարգապահութենէ բռնադատեալ՝ ամենամեծ ոճիրը գործեցին հարստահարուած ալգի մը անդամներուն համար : Ուրիշները կաշկանդեցին այն շղթայներով, որոնք իրենց ոտքերը կը պրկեն :

« Անոնցմէ շատերը պատերազմեցան առանց գիտնալու թէ ուր էր արդարութիւն և ուր անիրաւութիւն, բայց հազարաւորներ դառնութեամբ և սրտի սեղմումով

կուռեցան, վանդի անոնք գիտէին որ իրենց խղճին և իրենց ազգին դէմ կը գործէին : Քաջ գիտենք որ այն անիրաւութիւնները դարմանելու համար ոչինչ պիտի կըրնանք ընել, բայց ըրինք ինչ որ կրնայինք մեր հայրենակիցներէն ամենէն տգէտները արգելելու համար անոնց օրինակին հետեւելէ, և անգլիական առաջարկներէ շրջանալէ :

« Մեր օրկանն եղող թերթը երեք անգամ դադարման դատապարտուեցաւ, վանդի կը քննադատէր պատերազմը, զօրք ժողովուրդ յիսնապետներուն ընթացքը և Իրլանտացի զինուորները :

« Որովհետեւ անգլիական կառավարութիւնը Իրլանտացի քաղաքային զինուորներու տգիտութենէն կ'օգտուէր զանոնք Ափրիկէ խրկելու համար, մենք յատուկ գործիչներ խրկեցինք անոնց մէջ զանոնք տարահամոզելու համար, և պարծենալով կ'ըսենք թէ խիստ փոքրամասնութիւն կը կազմէին մեր քաղաքացի զինուորները ձեր թշնամիներուն մէջ :

« Իրլանտացի գլխաւոր քաղաքներուն մէջ ժողովներ ունեցանք, որոնց շատերը նմանը չ'տեսնուած բազմաթիւ ունկնդիրներ ունեցան : այս իրողութիւնը ապացոյց մ'է որ մեր ազգապետները կը նշաւակեն անգլիական ոճիրը :

« Մեր գործունէութիւնը ապարդիւն չը մնաց : վանդի այս տողերը գրողներս տեսանք վաչտեր, որոնք ժողովուրդին, արհամարհանքին տակ նաւ մտան :

« Աղքատ ենք և երկպառակութեամբ բաժնուած, և լաւ գիտենք որ մեր ըրածը ոչինչ է՝ տակաւին ըլլալիքն քով : Բայց Ձեր Մեծութենէն կը խնդրենք ընդունիլ այս համեատ արգիւնքը :

« Ձեր թշնամին մեր թշնամին է : Մեր ազօթքը, որ վրէժ կը հայցէ, ձեր ժողովուրդին ազօթքին կը միանայ Ամենակարողին գահին առջև, և այն նետերը որոնք՝ երբ ժամանակը գայ մեր և ձեր ժողովուրդին տառապանքին վրէժը պիտի լուծեն՝ միեւնոյն կապարճի մէջ պահուած են » :

Արմենիայէն հետեւեալները կը քաղենք ՍՍՈՒՆԻ ՔՆՆԻՉ ՅԱՁՆԱԹՈՂՈՎ . . .

Սուլթանի թիկնապահներէն էնվէր բաշա, Կ. Պոլսոյ Վերաքննիչ ատենին անդամ էմին պէյ և Վճռաբեկ ատենի արձանագրիչ Քարտուզար Մէհմետ Թէվֆիզ պէյ որոնք Բ. Դրան կողմէն Սասուն զրկուած էին, Սպաղանքի կոտորածի գործը տեղին վրայ քննելով ստուգելու պաշտօնով, Հոկտ. 11 ին Կ. Պոլիս վերադարձած են :

Աւելորդ է ըսել թէ այդ թրքական քննիչ յանձնաժողովի կազմութիւնը կատակախաղ մ'էր միայն, երևոյթները փրկելու և խնդիրը քննցնելով խեղճելու համար :

Պէթրոփէն կը հաղորդեն թէ քրիստոնեայնները և մահմետականները սաստիկ յուզուած են իրարու դէմ : ամեն իրիկուն մէկ երկու սպաննութիւն կը պատահի : Նայ՛ . 1 ին, Պէյրութի պատերին վրայ ձեռագիր յայտարարութիւններ փակցուած էին որոնք քրիստոնեայնները սպաննելու հրահրանք էին : Տեղական իշխանութիւնները պատերի վրայէն փրցուցին այդ յայտարարութիւնները : Հայֆաի անկարգութիւններին պատճառով ձերբակալուած 60 քրիստոնեայններ Պէյրութ բերած են դատելու համար : ԱԼԷՔՍԱՆԴՐՈՒՄԻՆԻԿԻՆ կ'իմացունեն թէ կի-

լիկի Զուրբը գտնուող Ռուսական մարտանաւերը հոկտ. 15 ին մեկնեք են Ալէքսանդրէթէն Գունաստանի Զուրբն երթալու համար ուր թնդանթի փորձեր պիտի կատարեն :

Ռուսիա իմացուցած է Բ. Դրան թէ մտադիր է ռուսական նամակատուն մը բանալ Երուսաղէմի մէջ, ինչպէս որ Ֆրանսացիները բացին իրենց համար : Կըսուի թէ անգղիացիներն ալ թէ՛ Եսֆաի և թէ՛ Երուսաղէմի մէջ անգղիական նամակատուններ պիտի բանան :

Տ Ե Ղ Ա Վ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ վարչութիւնը կառավարութեան ծրագիր մը ներկայեց հասարակաց խնայողական անուակներու մասին : ՅՈՒՆԱՍՏԱՆԻ գիւնադիտական գործակալութեան հասած հեռագրի մը համաձայն Հելլենական կառավարութիւնը տասը օրուան քարանթիւնայի պիտի ենթարկէ Եգիպտոսէն մեկնող շոգենաւները, սկսեալ ամսոյս 8 էն : Ապրանքի ներածութիւնը արգիւտել է բացարձակապէս :

ՄՕՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Տրմնի շոգենաւին նաւապետը ժանտախտէն մեռաւ Աղէքսանդրիոյ մէջ : Նաւապետը շոգենաւին մէջ վարակուեցաւ այս մահաուիթ հիւանդութեանէն :

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ Նախարարութիւնը կառավարչներու ուղղուած մի շրջաբերականով կը յայտարարէ թէ՛ փոխտտական բանտարկեալ ձերբակալողներուն վարձատրութեան վրայ յաւելում մը որոշուած է :

ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ քիչ ատենէն լոյս պիտի տեսնէ երկհատոր գիրք մը « Սուտան Կորտոնի և Քիչնեի ձեռքերուն մէջ » խորագրով, գործ Իպրահիմ Ֆէվզի Բաշային, նախկին Հրամանատար Եգիպտական զօրախումբին, Խարթումի անկման միջոցին : այս գիրքը, որ քիչ ազմուկ չ'պիտի յարուցանէ, պիտի թարգմանուի Ֆրանսերէնի, Անգլերէնի, Գերմաներէնի և Իտալերէնի :

ՀՈՒՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԵՐՏԵՂՅԱՆՏ յաճառուկը, որ իր կառավարութեան կողմէն մասնաւորապէս Լօրէնցո-Մարգէզ խրկուած էր նախագահ Քրիկէրը Եւրոպա բերելու համար, հինգշաբթի օրը Սուէզ հասաւ : Հոլանտական Հիւպատոսը նաւապետին յանձնեց այն ամեն հեռագրներն ու նամակները, որոնք հասած էին իր և նախագահին հասցէին : Բազմաթիւ թերթերու թղթակիցներ ունկնդրութիւն խնդրեցին, բայց ծերունի նախագահը մերժեց ի բաց առեալ Բարիզեան թերթի մը կողմէն մասնաւորապէս խրկուած թղթակից մը որ Տրէյտսի կողմէն յանձնարարական մը ունէր :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բէթէրպուրկ 15 նոյմ. — Չարը, որ ժանտախտեղով կը տառապի, քիչ մը բարւոքած է :

Թիէն-Չին 15 նոյմ. — Կայսերական հրովարտակ մը կը ծանուցանէ որ կայսրն ու մայր կայսրուհին Բէթին պիտի վերադառնան :

Լոնտոն 15 նոյմ. — Վրիպուրկի մօտ ընդհարում մը տեղի ունեցաւ, Գարի ոստիկանութիւնը կորսնցուց երեք հոգի և Պօէրնեը՝ եօթը :

Բարիզ 15 նոյմ. — Մատրիտի ճեպընթացը գիծէն ելաւ Պատեոնի մօտ. 17 ճամբորդ մեռան, որոց մէջն է Իտալիոյ արտակարգ պատուիրակը, Շիլի գեասպանը և հետեորդները. քսան հոգի ալ վիրաւորուած են :

ՀԱՆԳԻՍ ԱՄՍՈՐԵԱՅԻ

ՆՈՅՆՄԵՐԻ ՊՐԱԿԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ-Թղթակցութիւն Արգարու և Քրիստոսի ըստ նորագոյն արձանագրութեան Եփեսոսի :

ԼԵԶՈՒԱՐԱՆԱԿԱՆ-Արաբկիրի գաւառաբարբառը :

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ-Ուսումնական ուղեորութիւն Բէլք և Լէման գիտնականաց :

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ-Գէորգայ Պիսիդիայ վեցօրեայը :

ՊԱՏՄԱԿԱՆ-Եղիսաբեթուպոլսոյ քաղաքային ներքին կարգադրութիւններ - Դաշնագրութիւնք - Պարտաթղթեր - Կտակ : Այլևայլք - Նոր հրատարակութիւնք : Քաղաքական տեսութիւն :

ԱՁԴ

Հայ Լսարան-Ընթերցատան ընկերութեան յարգոյ անդամները կը հրաւիրուին Ընդհանուր Ժողովոյ, որ տեղի պիտի ունենայ ամսոյս 18 ին իրիկուան ժամը ութնին Լսարան-Ընթերցատան մէջ, որ ի Պազար-Մուրուր, հետեւեալ օրակարգով .

Ընտրութիւն Մայր-Դիւանի պակասեալ անդամոց :

Ընտրութիւն Իրաւադար ատենի :

Մասնաւորապէս կը խնդրուի Պատ. անդամներէն որ հաճին ներկայ գտնուիլ սոյն ժողովոյն, որ ինչ ինչ տեսակէտներով անվրէպ տեղի պիտի ունենայ ներկայներուն թիւը մեծամասնութիւն համարուելով :

Ի Դիմաց Մայր-Դիւանի Լսարան-Ընթերցատուն ընկերութեան :

Ատենադպիր Ա. Ատենապետ  
Հրատարեալ Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ երկմորդ քանթերթեան պրակն, որ կը բաղկանայ 160-320 երկսիւն էջերէ և զարդարուած է 91 գեղեցկատիպ պատկերներով :

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ մէջ կը նրկարագրուին .

Ա. — Մեր բոլոր նահանգները, գաւառները, քաղաքները, աւանները, գիւղերը, լեռները, դաշտերը, լճերը, վանքերը, և այլ նշանաւոր և յիշատակաց արժանաւոր տեղուանք : — Բ. — Յատուկ խը-

նամքով ազգային աշխարհագրական պատմութիւնն, ինչպէս նաև հնախօսութիւնն, իրենց բաժինն ունին գործոյս մէջ, և իւրաքանչիւր նահանգաց, գաւառաց և քաղաքաց բերոց վրայ լիովին տեղեկութիւն կը տրուի : — Գ. — Մեր գաղթավայրերն ևս կը մտնեն Բաւարանիս մէջ, և ըստ կարելւոյ, երկրագնդոյ վրայ գտնուող այն ամեն քաղաքներն՝ յորս բնակած և յիշատակ մը թողած է հայութիւնն, և կամ տակաւին կը բնակի : — Դ. Չանապան ձեռագրաց և շինուածոց յիշատակարանաց մէջ յիշուած աշխարհագրական անուններէն այն ամենը՝ որ կրնան հետաքրքրական ըլլալ՝ կը շանանք գուրս չ'թողուլ : — Ե. Կը յիշատակենք նաև այն ամեն այլազգաբնակ գիւղերն, յորս կը գտնուին ինչ ինչ յիշատակարանք և բեկորք հայրենի հնութեանց : — Զ. — Նշանաւոր անուանոց շատերու ստագաբանութիւնն ալ յառաջ կը բերենք, և ումանց դիմաց ըստ տեղւոյն կը նշանակենք օտար ազգաց անուանակոչութիւնն՝ իրենց յատուկ գրերով : — Է. — Ի ստորև այն անուններուն, որոց վրայ աւելի ընդարձակօրէն գրած են ուրիշ ազգային և օտարազգի հեղինակներ, և կամ տուած են օգտակար տեղեկութիւններ, առանձին գրքերու կամ թերթերու մէջ, կը նշանակենք համառօտագրութեամբ նոյն գլխին կամ թերթն և գլուխն կամ էջն :

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ այս երկրորդ պրակն հրատարակ հանած ժամանակ, կը փութանք յայտնելու մեր խորին շնորհակալութիւնները այն ամենայն ազգային բանասէրներու, լրագագ և հանդէսներու յարգելի խմբագիրներուն՝ որոնք բարեյօժար կամօք փութացին թէ՛ առանձին նամակներով խրատուեալ զմեզ և թէ՛ տպագրութեամբ գրախօսականներ կամ ազգեր չրատարակել :

Որովհետև շատեր փափաքեցան գիտնալ թէ քանի՛ պրակաց մէջ պիտի աւիտիուի ամբողջ Բաւարանս, զիրենք գոհացնելու համար միջին հաշուով մը միայն կըրնանք ըսել, թէ կարելի է լինի 10 էն 12 քանթերթեան պրակ :

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ նորանոր պատկերաց լուսանկարներ ձեռք բերելու համար կը հանդիպինք բազմադիմի դժուարութեանց, որով երբեմն կ'ստիպուինք զանց ընել անուանի քաղաքի մը կամ գիւղի, եկեղեցւոյ մը կամ վանքի պատկերն : Այս մասին մեծապէս մեզ նպաստած պիտի լինին այն ազնիւ ազգայիններն, որոնք կամ արուեստիւ լուսանկարիչ լինելով և կամ Բնաշխարհի նուիրական սրբավայրերու և սքանչելի տեսարանաց լուսանկարներու սիրող և հաւաքիչ, բարեհաճին մեզ զրկել, վերստին ետ ընդունելու պայմանաւ, իրենց լուսանկարներէն մի մի օրինակ և կամ ուննց ցուցակն :

Ամեն դասակարգի անձանց դիւրամատչելի ընելու համար ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԸ, որոշած ենք շարունակաբար շտապական թերթերէ ձեացած պրակներով հրատարակել զայն. և փոխանակ ամբողջ գործին բաժնեգինը մէկ անգամով կանխադանձելու, ամեն անգամ երբ նոյ պրակի մը հրատարակուիլն իմանան՝ այն ժամանակ թող բարեհաճին բաժանորդք զրկել նոյն պրակին բաժնեգինը :

Միևնոյն ժամանակ կը փութանք ծա-

նուցանելու Բնաշխարհի սիրով տոչորող ամեն Հայու, թէ քիչ ժամանակի մէջ ունեցանք բազմաթիւ բաժանորդներ, որք օր աւուր բազմանալու վրայ են. ուստի Բնաշխարհիկ Բառարանը ունենալ փափաքողք փութալու են օգուտ քաղել այժմեան բարեյաջող պարագայէն պրակ պրակ գնելով Բնաշխարհիկ Բառարանը վասն զի, հակառակ պարագային կարելի է որ սպառին տպագրուած օրինակներն, և կամ գինն համեմատաբար բարձրանայ:

Բնաշխարհիկ Բառարանի իւրաքանչիւր պրակի գինն է, ճանապարհի ծախքը միասին, զուտ 3 ֆրանք:

Այն անձանց, որ կարենան մէկ անգամէն տասը օրինակ գնել, մէկ օրինակ նուէր կը զրկուի:

1899դ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ  
ՔՐԷՏԻ ՖՕՆՍԻՅԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ  
15 ՆՈՅՆՄԲԵՐ 1900

Table with 2 columns: numbers and their corresponding values. Includes entries like 100,000, 148,339, 1000, 16,525, 18,559, etc.

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

ԿԵՐՁԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրախն դիմացը, նորաչէն խանութներուն մէջ:

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, և մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զրեստներ ունենալով:

Ա Ձ Դ

Եգիպտացեանկ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արեւելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է գիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին:

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ գարոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով:

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ զուճար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յՄ.զգ. վարժարանն ի Տարպէլ-Կինէն:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԾԱՍՍԱՆԱԿԸ ՊՐԱՍ Ե

Անգղիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Գառնիկ Էֆ. Սիրունեան գոհացում տալու համար շատ մը երիտասարդաց փափաքին՝ Էօզպէքիյէ Մօնթէ Բառլօ Պօտէկայի ճիշտ դէմը իւր տան մէջ Անգղիերէն լեզուի դասեր տալ սկսած է:

Նորագոյն մէթոտով կ'ուսուցանէ միմիայն Վեճ ԱՄՍՈՒԱՆ կարճ ժամանակամիջոցի մէջ լաւ կարգաւ, գրել և խօսիլ սոյն ամենակարեւոր լեզուն:

Ամեն օր երեկոյին ժամը 5 էն վերջը կը գտնուի իւր տունը, ուր կրնան դիմել նաև անգղիերէն աղերսագիր ևն. գրել տալու պէտք ունեցողները:

Փափաքողաց տուները այցելութեամբ դասախօսելու պատրաստ է:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օսանիյի դեղատանին դիւնացի փողոցին մեջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարեւախաններ, Գիւրտեր, Հրախրաւորներ, Մանազորներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՍԻ ԵՆ:

Ա. ՊԱՆԵԱՆ  
Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)  
Գին 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԻՄԲԱԿՐԱՏՈՒՆԸ

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ  
ՈՒՐԱԹ 16 ՆՈՅՆՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 8378, 5827, 3635, 3246, 2556, 2217, 2101, 814, 4849, 2225, 2880, 9736, 6653, 7615, 1438, 337, 6789, 3251, 4646, 9747, 7760, 3868, 5968, 4042, 759, 9773, 5850

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՌՈՒԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՎ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԵՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն անելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընդունութեան մէկ միլեար անելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Բանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ, կոթէն լարող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ. Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քոնսօլի բազմազան Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Ծօնօկրաֆներու:

ԱԻԱԶԱԽՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ դարերու մագաղաթեայ բըժըղկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ, օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ, կը փութամ յայտարարել աւազախտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս գեղազորներուն և բժշկաց՝ որպէսզի ուշագործիւն դարձնեն սոյն օգտակար դարմանին վրայ:

Աւազախտի միակ դարմանն ունենալու համար պէտք է գիմել ստորագրելոյս հասցէին ի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ, ՄՈՒԶԻԻԻ ԶՕՐԱՆՈՑԻՆ ԴԻՄԱՑ — ՄԷյտան ԱՊՏԻՆ:

Գիները

- 10 ֆրանք մէկ բաժին աւազ ունեցողի
- 20 » երկու » քար ունեցողի
- 30 » երեք » արմատացած հիւանդութեանց:

Սոյն դարմանը գործածուած օրէն խիստ պիտի տեսնուի առողջութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելագոյն առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները:

ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ավանաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդացուիլ ուղղողներն, կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօրէնին:

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յԱզեքսանգրիա: